



OPPORTUNITY L.A.

Ներդրումներ անելով Լոս Անջելեսի երեխաների մեջ

Ուշադրություն, ծնողներ:



ԱՆՎՃԱՐ. Երեխաների Խնայողական Հաշիվներ՝ օգնելու ձեզ և ձեր ընտանիքին խնայել քուլեջի համար:

Opportunity L.A.-ն անվճար խնայողական հաշիվ է նախնական 50 ԱՄՆ դոլարի ավանդով Լոս Անջելեսի Միացյալ Դպրոցական Շրջանի (LAUSD) աշակերտների համար: Լոս Անջելեսի Քաղաքը և Շրջանը՝ LAUSD-ի հետ միասին, համագործակցում են՝ յուրաքանչյուր առաջին դասարանցու Երեխաների Խնայողական Հաշիվ (CSA) տրամադրելու համար:

Արդյո՞ք գիտեիք:

Քուլեջի համար խնայողություններ ունեցող երեխաները:

- 3 անգամ** ավելի հավանական է, որ քուլեջ կգնան, և
- 4 անգամ** ավելի հավանական է, որ քուլեջ կավարտեն:

Երեխաների Խնայողական Հաշվի առավելությունները

- Երեխաների խնայողական հաշիվը կարող է օգնել ձեզ և ձեր երեխաներին գումար խնայել իրենց կրթության համար:
- Գրանցված LAUSD աշակերտները 50 ԱՄՆ դոլարի ավանդ կստանան:
- Լրացուցիչ ավանդներ կարող են կատարվել աշակերտների և ընտանիքի կողմից անձամբ և առցանց:
- Խնայողական հաշիվները աշակերտներին հասանելի են անկախ աշակերտի կամ ծնողի եկամտից, ծագումից կամ ներգաղթային կարգավիճակից:



CSA ծրագիրը ղեկավարվում է Լոս Անջելեսի Քաղաքի Բնակարանային + Համայնքային Ներդրումների Վարչության կողմից՝ համագործակցելով տեղական այլ գործակալությունների հետ:

Գործում են սահմանափակումներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.OpportunityLA.com

Email: cifd.opportunityla@lacity.org



OPPORTUNITY L.A.

Ներդրումներ անելով Լոս Անջելեսի երեխաների մեջ



Հաճախակի Տրվող Հարցեր

Ի՞նչ է Opportunity LA-ը:

Opportunity LA-ը Լոս Անջելեսի ավելի մեծ տարածքում երեխաների խնայողական հաշվի (CSA) առաջին ծրագիրն է: Գարնանից սկսած հաշիվները ավտոմատ կերպով կբացվեն 50 ԱՄՆ դոլար ավանդով՝ ընտրված դպրոցներում ընդունված առաջին դասարանի աշակերտների համար:

Ի՞նչ արժե Opportunity La-ին մասնակցությունը:

Աշակերտի կամ ընտանիքի համար Opportunity LA-ին մասնակցելն անվճար է:

Ի՞նչ կլինի, եթե չեմ ցանկանում, որ իմ երեխան մասնակցի:

Այն ընտանիքները, որոնք չեն ցանկանում մասնակցել, կարող են ներկայացնել գրանցման ընթացքում LAUSD-ից ստացված հրաժարվելու ձև: Մանրամասների համար տես ծրագրի կանոնները և ուղեցույցը:

Հնարավոր է միջոցներ հանել այս Ծրագրի հաշվից:

Ընտանեկան արտակարգ իրավիճակների դեպքում աշակերտը կամ ծնողը/խնամակալը կարող են պահանջել աշակերտի հաշվի որոշ կամ բոլոր վճարների վաղաժամ ստացում: Գործում են սահմանափակումներ:

Ի՞նչ նպատակով կարող եք օգտագործել այս խնայողությունները:

Աշակերտի CSA հաշվում եղած միջոցները կարող են օգտագործվել միայն ավագ դպրոցից հետո կրթության ծախսերին օգնելու համար: Մանրամասների համար տես ծրագրի կանոնները և ուղեցույցը:

Եթե ուսանողը մասնակցի, դա կազդի՞ ստացվող նպաստների վրա:

Ինչպիսիք են Calfresh-ը կամ WIC-ը:

Ո՛չ, միջոցները պահվում են Լոս Անջելես Քաղաքի քաղաքապետարանի կողմից աշակերտի համար և չեն կարող համարվել որպես ընտանիքի եկամտի մի մաս:

ՀԱՎԵԼՑԱԼ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐ ԷԼ.ՆԱՄԱԿ
ՈՒՂԱՐԿԵՔ ՄԵՁ՝

cifd.opportunityla@lacity.org

ՀԱՎԵԼՑԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՅՅԵԼԵՔ.

www.OpportunityLA.com